Առավոտ
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7.07.2010



# «ՔԱՆԴՎԱԾ ԵՆ ՀԱՎԱՏՆ ՈՒ ԳԱԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

## ԳԱԱ ինստիտուտներից շատերի շենքերը վթարային վիճակում են

Հովսեփ Արղության 2-րդ նրբանցք, 10 տուն հասցեում գտնվում է ՀՀ ԳԱԱ ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտը: 50-ամյա պատմություն ունեցող այս հաստատությունում նախկին շուրջ 300 աշխատակցի փոխարեն այժմ աշխատում է 111-ը, իսկ ինստիտուտի 4 մասնաշենքերը հեռու են բարեկեցիկ լինելուց: Ինստիտուտի տարածքի առյուծի բաժինը այժմ չի պատկանում գիտական հաստատությանը: Այդ հատվածում կառուցվել է մի բարձրահարկ բնակելի շենք, իսկ դրա կողքին շուտով վեր կխոյանա եւս մեկը: Մեր տեղեկություններով՝ այս շենքերը կառուցում է իրանական մի ընկերություն:

«Առավոտը» երեկ այցելեց ինստիտուտի տարածք: Սկզբում մեզ «դիմավորեցին» բարձրահարկ «էլիտարների» հողն ու փոշին, այնուհետեւ ինստիտուտի գողտրիկ այգին, որը, ցավոք, ռոոգման խնդիրների պատճառով սկսել է չորանալ: «Առավոտի» ֆոտոխցիկը ֆիքսեց ինստիտուտի շենքային «կնճռոտ» կողմերը: Տնօրեն **Նիկոլայ Կնյազյանը** հաճախ չէր էլ ցանկանում դժգոհել՝ հույս չունենալով, որ դրանից ինչ-որ բան կփոխվի: Այնուամենայնիվ, խնդրեցինք մանրամասնել ինստիտուտի հրատապ խնդիրների մասին: Նա նշեց. *«Հրատապ է ինստիտուտի տարածքի ցանկապատումը: Քանի որ ջեռուցում չկա, բոլոր մասնաշենքերը նմանվել են այն բնակարանին, որտեղ երկար ժամանակ մարդ չի ապրել՝ ամենուրեք բորբոս է»:* Համեմատաբար բարվոք վիճակում է ինստիտուտի



վարչական մասնաշենքը, ծայրահեղ՝ գրադարանային մասնաշենքը, որտեղ լուսամուտները, տնօրենի խոսքով, ծառայում են միայն լույսի մուտքի համար, ոչ թե ցրտից կամ շոգից պաշտպանելու: Դառնալով 4-րդ մասնաշենքի՝ դեռեւս լուծման հեռանկար չունեցող խնդիրներին՝ պարոն Կնյազյանը նշեց. *«Թերմիկ դահլիճի տանիքը հիմնանորոգման կարիք ունի. անընդհատ կաթում է: Թերմիկ դահլիճը հնարավորություն կտար մեծամասշտաբ փորձնական աշխատանքներ կատարելու, քանի որ այնտեղ ծավալային վառարաններ եւ սարքավորումներ կան: Դահլիճում մտադրություն ունենք կատալիզող նյութերի արտադրություն դնել, ինչը կապված է փոքր քիմիայի հետ, որը էկոլոգիապես մաքուր է, արտանետումներ չկան»:* Խնդիրներից բացի, լրացուցիչ անհանգստություն են առաջացնում նորակառույց բնակելիները: Պարոն Կնյազյանը այս մասին ասաց. *«Սա նույնն է, ինչ հաստոցաշինական գործարանի կողքին մանկապարտեզ կառուցեն, այնինչ՝ համապատասխան գոտի պիտի լիներ, որ պաշտպաներ ոչ միայն աղմուկից, այլեւ ամեն ինչից: Օրինակ՝ Մոսկ... եւ ՌԴ-ի այլ տարածքների գի... կան կենտրոնները կառուցվ... մեծ տարածքներում, անտառ... գոտիներում, ուստի արդյունք... էլ են այլ... Ոչ միայն մեր շ... թյուններն են քանդված, այլ... փոքր հավատը՝ ապագայի ն... մամբ»:*



Թե այս իրավիճակը ե՞րբ կ... վի՝ դժվար է ասել, մանավ... եթե հաշվի առնենք, որ տ... կան բյուջեն կազմելիս ԳԱ... ինստիտուտներին, այսպես ա... հրահանգ է իջեցվում, որ ... ծախսերին» հանկարծ չդիմ... քանի որ վստահ են՝ կառավ... թյունից, միեւնույն է, այս առ... հաստատ ավելի գումար չ... տրամադրի:

**ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅ...**